# ՔՈԲԱՅՐ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՊԵՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ, ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից[1] 2012 թ. պեղումներ իրականացվեցին Լոռու մարզի Քոբայրի վանքի վերականգնվող զանգակատան շրջակա տարածքում:*

Նկ. 1. Քոբայրի վանքը հարավ-արևելքից:

*Քոբայրի վանքը (նկ. 1) գտնվում է ներկայիս Թումանյան քաղաքի արվարձան համարվող Քոբայր գյուղում: Այն զարգացած միջնադարում Հյուսիսային Հայաստանի հոգևոր, մշակութային և գրչության հայտնի կենտրոններից էր: Քոբայրի վերաբերյալ հիշատակություններ են պահպանվել Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու, Կիրակոս Գանձակեցու, Ներսես Լամբրոնացու մոտ[2]: Ըստ Վարդան Արևելցու և Մխիթար Այրիվանեցու՝ Քոբայրում կուսանոց է գործել: Մենաստանը հիմնադրվել է Բագրատունյաց տան Կյուրիկյան ճյուղի Կյուրիկե Բ թագավորի դուստր Մարիամի կողմից 1171 թ.[3]: Քոբայրի վանական համալիրի կառույցների ընդարձակումը սկսվում է XII դարի վերջից – XIII դարի սկզբին, երբ վանքը Կյուրիկյաններից անցնում է Զաքարյաններին: Այդ ժամանակ են կառուցվում գլխավոր եկեղեցին, մատուռ-ավանդատունը, դրան արևմուտքից կից բաց սրահը, սեղանատունը, զանգակատուն-տապանատունը, մատուռները և ամրաշինական կառույցները: Դրանք բոլորն էլ այսօր կիսավեր վիճակում են: 2010 թ. «Բուրգ 999» ՍՊԸ կողմից (ղեկ. Ա. Անանյան) սկսվել և մինչ օրս շարունակվում են զանգակատան վերականգնման աշխատանքները:*

---

[1] *Արշավախմբի ղեկ.՝ Հ. Մելքոնյան, հնագետներ՝ Դ. Միրիջանյան, Ա. Բաբաջանյան, ճարտ.՝ Ա. Ջալալյան:*

[2] *Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 122, Մխիթար Այրիվանեցի. Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 63, Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 393, Ներսէսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի՝ Ատենաբանութիւն և Թուղթ և Ճառք, Վենետիկ, 1865, էջ 223:*

[3] *Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմ. Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 352: Այդ կապակցությամբ էլ առաջին եկեղեցին անվանվել է Մարիամաշեն, որի մասին վկայում է դրա մուտքի բարավորի շինարարական արձանագրությունը:*

*XIV–XVI դարերում Քոբայրի վանքի գործունեությանը վերաբերող վկայությունները սակավաթիվ են: Դրանք մի քանի տապանաքարերի հիշատակագրեր են, որոնք հայտնաբերվել են վանքի տարածքում: Ըստ վրացերեն արձանագրությամբ մի տապանաքարի[4] ՝ այստեղ է թաղված Իվանեի որդի և Շահնշահի եղբայր Վահրամը, որն ապրել է 1350-ական թվականներին: Մեկ այլ վրացագիր տապանաքարի վրա արձանագրված է՝ «Դավիթ՝ Շալվայի որդի»[5]: 1442 թ. Ոհաննե Թմոքվեցի գրչի կողմից Սերկևլի գյուղում ընդօրինակած Տոնականի հիշատակարանում քանիցս հիշվում է պարոն Շալվեն՝ որպես «... հաւատարիմ ծառայս աստուծոյ պարոն Շալուէս, ցանկացող եղև լուսափայլեալ և մեծապատ տաւնականիս, ի հաստատութիւն կաթողիկէ եկեղեցւոյ» և նրա որդին «... նորաբողբոջ դեռաբուսիկ զաւակի սոցա՝ պարոն Դաւթին, զի տէր աստուած պահեսցէ զսա անփորձ և անսասան մինչև ի խորին ծերութիւնն, ամէն»[6]: Մեկ այլ ձեռագրում՝ 1441 թ. ընդօրինակված Ճառընտիրում, Շալուեն հիշատակվում է «... այր բարեպաշտօն, քրիստոսադաւան և ուղղափառ, այր հսկայազօր ի մրցմունս պատերազմաց, դիւցազնական ի յազատաց և պայազատ ի յիշխանաց, ի յազանց և ի տոհմէ ասքանազեան սեռից»[7]: Այս հիշատակություններից պարզ է դառնում, որ վերոհիշյալ անձիք ապրել են XV–XVI դարերում և գուցեն ուղղափառ դավանությանը հարելով՝ թաղվել Քոբայրի վանքում: Նորահայտ արձանագրությունները կարող են լույս սփռել Քոբայրում գործունեություն ծավալած և այստեղ թաղված անձանց մասին՝ մատնանշելով նաև Քոբայրի վանքի շարունակական գոյությունը:*

*XVII դարում Քոբայրը հիշատակվում է Շմավոն Աբեղենց Դսեղեցու ընդօրինակած ձեռագրում (Մատենադարան, -1473) արդեն որպես «... յանապատս Քոպայրոյ Բարձրաբերձ Աստուածածինիս, որ է Լօռի»[8]: XVIII դ. կեսերին, ըստ Վախուշտի արքայազնի տեղեկության, այնտեղ գործող եկեղեցի է եղել, այն էլ միաբնակ դավանության[9]:*

*Քոբայրի վանքի շինությունների ճարտարապետական հարդարանքում զգացվում է վրացական ճարտարապետության ազդեցությունը, քանի որ այն անցել էր Զաքարյանների տոհմի վրացադավան ներկայացուցիչներին[10]: Քաղկեդոնական ազդեցությունը զգացվում է Հայաստանի հատկապես հյուսիսային շրջաններում: Վրացական ազդեցության ամենաակնառու տարրը եկեղե-*

---

[4] *Պ. Մ ու ր ա դ յ ա ն. Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 178:*

[5] *Նույն տեղում, էջ 180:*

[6] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 531–536:*

[7] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1943, էջ 102:*

[8] *Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 559, Մայր ցուցակ հայերեն Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Դ, Երևան, 2008, էջ 1342:*

[9] *Պ. Մ ու ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 166:*

[10] *Զաքարե ամիրսպասալարի մահից հետո (1212 թ.) Իվանեն իր կնոջ Խոշաքի հետ քաղկեդոնական էին դարձրել մի քանի հայկական հին վանքեր և վրացադավան դարձրել Զաքարեի փոքր որդուն՝ Շահնշահին (տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, Գ, Երևան, 1977, էջ 198):*

*ցիների ճակատները խաչաքանդակներով զարդարելն էր, որը ստեղծվում էր խիստ ընդգծված պրոֆիլի միջոցով (Հառիճ, Գանձասար, Սխթալա, Քոբայր): X–XII դարերում Հայաստանում եկեղեցիների ներքին տարածությունները որմնանկարներով քիչ զարդարելը վրացական որոշակի ազդեցությամբ փոխվում է XIII դարում*[11]*: Որմնանկարներով զարդարված էին Քոբայրի գլխավոր եկեղեցու խորանը, մատուռ-ավանդատունը, բաց սրահն ու զանգակատան առաջին հարկը: Դրանք համեմատաբար լավ են պահպանվել միայն գլխավոր եկեղեցում և մատուռ-ավանդատանը*[12]*: Քոբայրի հուշարձանախմբի կառույցների պատերին, ինչպես նաև եղած և հայտնաբերված տապանաքարերի վրա առկա են մեծ թվով վրացերեն արձանագրություններ:*

*Այս հաղորդման շրջանակներում ներկայացվում են միայն վերականգնվող զանգակատուն-տապանատունը և նրա շուրջ ծավալված պեղման-մաքրման աշխատանքների արդյունքները (գծ. 1)*[13]*:*



Գծ. 1. Զանգակատան և հարակից շինության հատակագիծը:

*Զանգակատան շքամուտքի արևելյան կողմի վրացերեն արձանագրության համաձայն՝ այն կառուցվել է 1279 թ. Շահնշահ ամիրսպասալարի որդու՝ Մխարգրձելի և նրա կնոջ՝ Վանենիի կողմից: Այն քառակուսի հատակագծով սրահ է, որի արևելյան հատվածն ամբողջությամբ ընդգրկում է խորանը: Հատակը հարթեցված ժայռն է՝ մասամբ ծածկված տապանաքարերով: Միակ մուտքը հարավից է, որը դեպի արևմուտք որոշակի շեղում ունի: Շքամուտքի ուղղանկյուն, աստիճանաձև հորինվածքով շրջանակը զարդարված է փոքրիկ փորագիր եռանկյունների հաջորդական շարքով: Աստիճանաձև շքամուտքի*

[11] Л. Дурново. Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, с. 32–33; *Նույնի՝* Очерки изобразительного искусства средневековой Армении. М., 1979, с. 152.

[12] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 1058:*

[13] *Չափագրությունն ըստ ճարտ. Ա. Ջալալյանի:*

*մեջ ամփոփված է կիսայունիկի վրա հենված ճակատակալ քարը, որն ունի պարզ հարդարում: Նրա աջ և ձախ անկյուններում մեկական վարդյակ է, իսկ բարավորի հարթ մակերեսին կա ելնդավոր գոտիով ընդգծված, երեք տառից բաղկացած* ЭК° *հունատառ մակագրություն, որն* εκκλησία *բառի հապավումն է*[14]*: Շինությունը պսակված է ութսյունանի ռոտոնդայով (գծ. 2)*[15]*:*




Գծ. 2. Զանգակատուն-տապանատան վերակազմությունը:

*Զանգակատան հարավային միակ մուտքի դիմաց բացվեցին ամբողջական և բեկորային տապանաքարեր՝ մի մասը վրացերեն արձանագրություններով*[16] *(նկ. 2): Մուտքի առջև վրացերեն արձանագրությամբ երկու տապանաքար ընթերցել էր հանգուցյալ Պ. Մուրադյանը: Ըստ այդ վերծանության՝ առաջինը պատկանում էր Չաչայի որդի Իվանեին, երկրորդը՝ Մամամթավարի (Հայրապետի) որդի Պետրեին*[17]*:*

*Զանգակատան հարավային հատվածի մաքրման արդյունքում հայտնաբերված տապանաքարերից ինն ամբողջական են, բոլորն էլ հարդարված եզրային ակոսազարդով: Դրանցից հատկապես կարևորվում է եզրային ակոսազարդով պարփակված կամարի մեջ հոգևորականի բարձր աստիճանը ցուցող սխեմատիկ պատկերով և վրացերեն արձանագրությամբ տապանաքարը (նկ. 3): Հայտնաբերվել են նաև տապանաքարերի ինը բեկոր, որոնցից չորսը վրացերեն արձանագրություններով, մեկը՝ մարդու սխեմատիկ պատկերի հատվածով:*

*Զանգակատան մուտքից արևելք երկշար հիմնախարիսխն է, որի շարունակությունն արևմուտքում մշակված ժայռն է (նկ. 4): Ուշագրավ է, որ ներքուստ ևս զանգակատան հյուսիսարևմտյան պատերի հիմքում, նույն մակարդակի վրա, երկաստիճան մշակումով ժայռն է (նկ. 5):*

---

[14] *Շնորհակալություն ենք հայտնում դրամագետ Հ. Հովհաննիսյանին՝ հունարեն հապավումն ընթերցելու համար:*

[15] *Զանգակատան վերակազմությունը՝ ըստ ճարտ. Ս. Մելիք-Քարամյանի:*

[16] *Արձանագիր տապանաքարերն ընթերցման նպատակով հանձնվել են համապատասխան մասնագետների:*

[17] *Պ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 181:*

*Մուտքի դիմաց հիմնաժայռը մշակված է, ստեղծելով ավելի ցածր մակարդակ, որտեղ տեղավորված են տապանաքարերը: Տեղանքը կտրատված է ժայռերով ու քարայրներով՝ առաջացնելով տարբեր հարթություններ, ըստ որոնց էլ դասավորված են համալիրի շինությունները:*

Նկ. 2. Տապանաքարերի ընդհանուր տեսքը:

*Տեղանքի առանձնահատկություններից ելնելով՝ օգտագործել են նաև ժայռը, հարթեցնելով ու հարմարեցնելով նրան: Այն շատ հաճախ ծառայել է որպես շինության հատակ, պատ կամ նախաբակ: Զանգակատան մուտքին անմիջապես հարող տարածքում կա ջրահեռացման խնդիր: Այն առկա է ամբողջ վանքի տարածքում, նույնիսկ զանգակատուն-տապանատան ներսում, որտեղ ջրահեռացման համար հարթեցված ժայռի մեջ առվակոս են փորել:*

*Արևմտյան կողմում զանգակատան ստորին շարքերի հիմքում ժայռն է, իսկ վերին հատվածում ժայռի և զանգակատան միջև ստեղծված է մոտ 1,5 մ լայնությամբ միջանցք (նկ. 6): Միջանցքը մաքրելիս պարզվեց, որ ժայռի ստորին հատվածում ջրահեռացումն ապահովելու համար առվակոս էր փորված 3.9 մ երկարությամբ, որի շարունակությունն էր կազմում 7 կավե փողրակներից կազմված խողովակաշարը՝ 3 մ երկարությամբ: Փողրակների երկարությունը մոտավորապես 42–43 սմ է, տրամագիծը լայն հատվածում՝ 14 սմ, նեղ մասում՝ 8 սմ (գծ. 3):*

Նկ. 3. Տապանաքար՝ վրացերեն արձանագրությամբ:

*Խողովակներն ամբողջական են, բայց ջարդոտված: Դրանք վառ աղյուսագույն են, նեղ հատվածում առկա է շրջանաձև, ուռուցիկ գոտի՝ հաջորդ խողովակին միանալու համար (երկ. 7–8 սմ): Խողովակաշարը հարավային մասում ընդհատվում է և, տեղանքի առանձնահատկություններից ելնելով, կարելի է ենթադրել, որ այն շարունակվել է ժայռի ամբողջ երկայնքով, իսկ միջով հոսող ջուրը թափվել է ձորը:*

*Ջրահեռացման համակարգը բավական զարգացած էր միջնադարյան Հայաստանում, հատկապես խոշոր քաղաքներում, գյուղաքաղաքներում, ամրոցներում, պալատներում՝ գործող բաղնիքների կեղտաջրերը հեռացնելու հետ*

*կապված[18]: Եվ պատահական չէ, որ բնականից հորդահոս ջրեր ունեցող Քոբայրի վանքի տարածքում ևս կիրառել են ջրահեռացման այսպիսի համակարգ՝ ջրի կուտակումներից խուսափելու համար: Այդ նպատակով օգտագործել են և՛ հիմնաժայռը՝ առվակոսներ փորելով, և՛ կավե խողովակաշարը, որտեղ դրա անհրաժեշտությունը կար:*

Նկ. 4. Ժայռափոր հարթակ մուտքի դիմաց:

Նկ. 5. Երկաստիճան մշակումով ժայռը զանգակատան ներսում:

*Ուշագրավ է զանգակատան հյուսիսում բացված կառույցը, որն անմիջապես կցված էր նրան: Այն գրեթե քառակուսի հատակագծով սենյակ է՝ 4.13 x 3.10 ներքին չափերով: Սենյակի համար իբրև հարավային պատ ծառայել է զանգակատան հյուսիսային ճակատը, իսկ արևմտյանը՝ ժայռը: Սենյակն ամբողջացնելու համար կառուցվել են միայն արևելյան և հյուսիսային պատերը (պատերի հաստությունը՝ 0.8–1 մ):*



Գծ. 3. Կավե փողրակ:

Նկ. 6. Ջրահեռացման առվակոսն ու խողովակաշարը՝ զանգակատան արևմուտքում:

*Միակ մուտքը հյուսիս-արևմուտքից է: Դռան բացվածքի լայնությունը 1 մ է, բարձրությունը մինչև քարե շեմը՝ 1.15 մ: Պատերը շարված են*

[18] О. Халпахчьян. Гражданское зодчество Армении. М., 1971, с. 212, 216; Р. Епремян. Водоснабжение древней и средневековой Армении.

*անմշակ քարերով և հողի լիցքով: Ներքուստ նկատվում են սվաղի հետքեր: Սենյակի ներքին հատվածը պեղելիս հարավարևելյան հատվածում բացվեց քառանկյուն օջախ, որի մեջ դրված էր ամբողջական երկկանթ մի անոթ (նկ. 7): Օջախն անմիջապես ժայռի վրա էր (պահպանված բարձրությունը՝ 34 սմ, տրամագիծը՝ 52 սմ, պատերի հաստությունը՝ 6 սմ):*

Նկ. 7. Զանգակատան հյուսիսային պատին կից սենյակ քառանկյուն օջախով:

Նկ. 8. Ժայռափոր սանդ:

*Սենյակի պատերի շարվածքը (անմշակ և երկրորդային օգտագործման քարերով շարվածք՝ հողե լիցքով և անփույթ սվաղով), հայտնաբերված խեցեղեն գտածոները գալիս են փաստելու, որ կցակառույց սենյակը ծառայել է տնտեսական նպատակով վանքի գոյության վերջին փուլում, երբ զանգակատունն այլևս չէր գործում:*

*Սենյակի մուտքն արտաքուստ բացելիս արևմտյան կողմում հայտնաբերվեց ժայռի մեջ փորված սանդ (տրամագիծը՝ 20 սմ, խորությունը՝ 23 սմ), որը ժամանակագրորեն ավելի վաղ է, քան կցակառույց սենյակը: Այն, հավանաբար, ժամանակակից է զանգակատանը (նկ. 8):*

*Պեղման-մաքրման աշխատանքների արդյունքում հայտնաբերվեցին խեցեղեն և մետաղե փոքրաքանակ առարկաներ, ինչպես նաև զանգակատանը պատկանող ծածկասալերի հատվածներ և քանդակազարդ մի բեկոր [նկ. 9. ա), բ)]:*

ա. Քանդակազարդ բեկոր:

բ. Ծածկասալերի հատվածներ:

Նկ. 9.

*Խեցեղեն գտածոները բեկորային են, գերազանցապես խոհանոցային կոպիտ ամանեղեն. կժեր, կճուճներ, քրեաններ, թասեր, խփեր (նկ. 10, ա–դ): Սրանց մեջ առանձնանում են կարմրափայլ և կարմրաներկ թասերի բեկորները և ամբողջացող սափորը՝ գտնված օջախի շրջակայքից: Այն միականթ է՝ պարանոցի և իրանի հատվածներում հորիզոնական գծազարդերի միջև սանրաքաշ ալիքազարդերով: Կան նաև ջնարակած անոթների սակավաթիվ բեկորներ, որոնք թվագրվում են XII–XIII և XIV–XVI դարերով:*

ա. Կարմրափայլ անոթներ (XIII դ.):

բ. Կարմրաներկ անոթներ (XIV–XVI դդ.):

գ. Սափոր (XV–XVI դդ.):



դ. Թասեր և սափոր (XIII– XIV դդ.):

Նկ. 10

*Այսպիսով, Քոբայրի վանական համալիրի զանգակատուն-տապանատան պեղման-մաքրման աշխատանքների հետևանքով հայտնաբերված տապանաքարերը, հնագիտական նյութը, կցակառույցը որոշակի տեղեկություններ են տալիս ուշ միջնադարում ևս վանքի գործունեության մասին: Հետագա պեղումները կարող են համալրել մեր պատկերացումներն այդ շրջանի վերաբերյալ:*

## РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКИХ РАБОТ В КОЛОКОЛЬНЕ МОНАСТЫРСКОГО КОМПЛЕКСА КОБАЙР

ДИАННА МИРИДЖАНЯН, АСТХИК БАБАДЖАНЯН

Резюме

Экспедиция Института археологии и этнографии НАН РА в 2012 г. провела раскопки на территории вокруг реконструируемой колокольни монастыря Кобайр в Лорийском районе РА. Перед южным единственным входом колокольни (построена в 1279 г.) были выявлены 9 целых и 9 фрагментов надгробных камней. На некоторых были надписи на грузинском. Каменное основание перед входом обработано, создавая тем самым более низкий уровень, на котором находятся надгробные камни. Выявленный в западной части глиняный водопровод является непосредственным продолжением канавы, вырубленной в скале. В результате изучения материалов из квадратной в плане комнаты у северной стены колокольни можно предположить, что она была построена позднее, когда колокольня больше не функционировала.

## RESULTS OF ARCHAEOLOGICAL EXCAVATIONS OF THE BELFRY OF KOBAYR MONASTERY

DIANNA MIRIJANYAN, ASTGHIK BABAJANYAN

Summary

In 2012 the expedition group of the Institute of archaeology and ethnography of NAS RA carried out excavations in the territory of the belfry of Kobayr monastic complex in Lori region RA. In front of the southern single door of the belfry (built in 1279) 9 complete and 9 fragmentary gravestones were found, some of which bore Georgian inscriptions. The rocky basement in front of the entrance is hewn creating a lower level where the gravestones were placed. In the western side of the belfry a pipeline of clay tubes was found, which is the direct continuation of the ditch dug in the rock. Adjacent to the northern wall of the belfry a room with a square ground plan was opened and by the studies of the materials discovered there it can be assumed that it was built later when the belfry was out of function.